

զար իքալիէնի մէջ, մինչեւ որ հո՛ն ալ հրդեհ մը պատահելով՝ մոխիր դարձուց Կարապետին վերջին հանգրուանը, այնպէս որ եօթանամամեայ հայ Յորն հարկադրեցաւ ազանիլ գիշերները ճամբաներու վրայ:

Վերջապէս՝ ֆրանսացի երեւելի անձնաւորութիւն մը բարեկամ վրան գթալով՝ ապաստան ճարեց անոր հանգանակութեամբ և զնեց խանութ մը Պուլըվառ սէ Բանօրամալի վրայ, ուր կապրէր ծերունին՝ ծախելով դիւրագին բաներ: Սակայն հո՛ն ալ անողոք բաղդն հալածեց զինքը, որովհետեւ օր մըն ալ ինք ամբաստանուեցաւ արգիլեալ ծխախոտ ծախելու յանցանքով, ու դատաստանի ենթարկուելով՝ հաղիւ կըրցաւ անպարտ ելնել ու ազատիլ տուգանքէ: Իր փաստաբանը՝ Տիւբլանդի՛ գրեց իր վարքը. — Վարժ Հայուն Կարապետի Մանուկ Օղլուլի սեղանաւորի, տպագր. Փարիզ 1828:

Այս յաջորդական ճախողութիւններէն ետք՝ Կարապետ, ա՛լ խելամուտ իր բաղդին դժնէութեան, որոչեց մեկուսանալ Արշիպեղագոսի կղզիներէն մին հանդերձ իր ընտանիքով, ու ապրեցաւ հոն վերջին համեստ իմաստութեամբ մը: